
Հայ մամուլը Եգիպտոսի մեջ: Մատենագիտական ցուցակ:
Կազմ. Պայրամյան Ս. Ն., Կահիրե, 2005, 396 էջ:

Ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայ ժողովուրդը իր մշակույթի կենտրոններն ստեղծել է օտար ափերում՝ գաղթօջախներում:

Եգիպտահայ գաղթօջախի մշակութային կյանքում առավել աշխուժություն է նկատվել XIX դ. 60-80-ական թվականներին: Գաղթօջախն իր կրթամշակութային հաստատություններով (դպրոցներ, գրադարաններ, ակումբ-ընթերցարաններ, հրատարակչական ընկերություններ, տպարաններ և այլն) դարձել է հայ մտավոր և հոգևոր կյանքի ամենախոշոր կենտրոններից մեկը: Այդ տարիների հետ է կապված նաև եգիպտահայ լրագրության սկզբնավորման պատմությունը: 1865 թ. մարտի 16-ին լուսավորական գործիչ, խմբագիր, հրապարակախոս Աբրահամ Մուրատյանի խմբագրությամբ Կահիրեում լույս է տեսել գաղթօջախի հայերեն առաջին պարբերականը՝ «Արմավենի» քաղաքական, ազգային, բանասիրական կիսամյա լրագիրը:

1865 թ. առ այսօր Եգիպտոսում հրատարակվել են 165 անուն պարբերականներ, որոնց մատենագիտական ցուցակները հատվածաբար տպագրվել են մամուլի էջերում, հայ մամուլի մատենագիտական ընդհանուր ցուցակներում և գաղութի պատմությանը նվիրված աշխատություններում: Սակայն եգիպտահայ պարբերականների համահավաք, ամբողջական ցուցակի հրատարակությունը մեկ առանձին գրքով մինչև օրս չէր իրականացվել: Այդ գործի նախաձեռնողը եղավ եգիպտահայ մտավորական, խմբագիր, հրապարակախոս, դոկտոր Սուրեն Նարպեյի Պայրամյանը¹: Նա հայրենիքի և օտար երկրների գրադարաններից, մատենադարաններից, մշակութային գործիչների ընտանեկան արխիվներից հայթայթած, իր ձեռքի տակ եղած եգիպտահայ պարբերականների հավաքածուների և հայ մամուլի էջերում, հայ մամուլի մատենագիտական ընդհանուր ցուցակներում, պատմաբան-բանասերների աշխատություններում տպագրված նյութերի բարեխիղճ ու մանրագնին համադրական ուսումնասիրման հիման վրա կազմել և 2005 թ. լույս է ընծայել «Հայ մամուլը Եգիպտոսի մեջ» մատենագիտական ցուցակը:

Այս արժեքավոր և օգտավետ աշխատությունը, որը երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է, առաջին հերթին աչքի է ընկնում նյութի լիակատար ընդգրկմամբ և, որ ամենակարևորն է, պարբերականների մատենագիտական տվյալների ստուգությամբ ու լիարժեքությամբ: Հեղինակը կարողացել է բավարարել մատենագիտական աշխատանքին անհրաժեշտ այդ պահանջը:

Սուրեն Պայրամյանի ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասից: Առաջաբանում (V-XVII էջեր) ծանոթություն է տրվում աշխատության սկզբնաղբյուրների, մի շարք պարբերականների մատենագիտական ճշտված տվյալների, մամուլի նորահայտ օրգանների, ցուցակի կազմման սկզբունքների և կառուցվածքի մասին:

Աշխատության հիմնական՝ երկրորդ մասում (2-256) ներկայացված է եգիպտահայ մամուլի ժամանակագրական ցանկը, որտեղ յուրաքանչյուր պարբերականի նկարա-

¹ Սուրեն Նարպեյի Պայրամյանը զբաղվում է ազգային, հասարակական, մշակութային, մարզական, հրապարակախոսական, կրթական, բարեսիրական գործունեությամբ: 1975 թվականից Կահիրեի թեմական ժողովի անդամ է: 1982-1987 թթ. եղել է «Յուսաբեր» օրաթերթի խմբագիրը: Ս. Էջմիածնի Սահակ-Մեսրոպ (1999) և ՀԲԸՄ-ի շքանշանակիր (1999) է:

գրքությունը տրված է երկու հանդիպակաց էջերում: Դրանցից մեկում զետեղված են մատենագիտական տեղեկությունները, մյուսում՝ շապկանկարը կամ առաջին էջի պատկերը: Նյութի նման դասավորությունը, ընդհանրապես գրքի գեղեցիկ ձևավորումը այն դարձնում են մատչելի ու հետաքրքիր:

Ս. Պայրամյանի կազմած ցուցակը, նախորդ մատենագիտական ցուցակների համեմատ, աչքի է ընկնում իր առավելություններով: Նախ այնտեղ ընդգրկված է սկզբից մինչև այսօր լույս տեսած եգիպտահայ մամուլի լրիվ ցանկը, որ համալրված է հավաստի սկզբնաղբյուրներից ձեռք բերված նորահայտ պարբերականներով («Նոր կեանք», 1896-1897, Ալեքսանդրիա, «Մեծ Մասիս», 1939, Կահիրե, «Հայ արիներու միություն», 1948, Կահիրե, «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր», 1940, Կահիրե և այլն):

Ցուցակում ճշտված են մի շարք պարբերականների («Ովասիս», 1927, Կահիրե, «Խարոյ» 1932, Կահիրե, «Անդաստան հայ մտքի», 1945, Կահիրե և այլն) լույսընծայման տարեթվերը, պարբերականությունը, տևողությունը, հրապարակման վայրը և մատենագիտական այլ տվյալներ:

Շտկված են հայ մամուլի նախորդ մատենագիտական ցուցակներում մի շարք պարբերականների խմբագիրների անուն-ազգանուններում սպրդած սխալներն ու աղավաղումները: Այսպես, հայ մամուլի մատենագիտական նախորդ բոլոր ցուցակներում «Լուսաբեր-Արև» (1909-1912, Կահիրե) թերթի խմբագիրների կազմում նշված է Վահան Քյուրքչյանի² անուն-ազգանունը: Մինչդեռ թերթի խմբագիրները եղել են Լևոն Մկրտիչյանն ու Սուրեն Պարթևյանը, ինչպես նշված է Ս. Պայրամյանի ցուցակում: «Բարի լուր» ամսագրի (1948, Կահիրե) խմբագրի անուն-ազգանունը ճշտված է: Պետք է լինի Կիրակոս Թումայան և ոչ թե Կարապետ Թումանյան: Ցուցակում շատ են նման կարգի ուղղումները:

Անհրաժեշտ է նշել, որ Սուրեն Պայրամյանը միանգամայն իր կազմած ցուցակում ընդգրկել է նաև ձեռագիր-մեքենագիր-խմորատիպ պարբերականները, որոնց թիվը Եգիպտոսում հասնում է 35-ի:

Ցուցակի առավելություններից մեկն էլ կրկնություններից զերծ լինելն է:

Օտար լեզուների իմացությունը հեղինակին հնարավորություն է տվել պրպտումների և ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերելու Եգիպտոսում հայերի լույս ընծայած օտարալեզու նորահայտ պարբերականներ (*«La caravane Կարաւան»*, ֆրանսերեն, 1938, Կահիրե, տեր և տնօրեն Ալեքսանդր Սարուխանյան և այլն): Ապա Ս. Պայրամյանը ընթերցողին տեղեկացնում է, թե հայերը Եգիպտոսում առաջին անգամ պարբերական հրատարակել են արաբերեն լեզվով («Էլ Ուաքաէ էլ Մասրէյա», 1840-1844, Կահիրե, տնօրեն՝ Արիստակես Ալթունյան): Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է հայ մտավորականության կատարած մեծ դերը Եգիպտոսի մշակութային կյանքում և հատկապես արաբական լրագրության զարգացման գործում:

Ս. Պայրամյանի գրքի երրորդ՝ վերջին մասում ներկայացված են եգիպտահայ մամուլի այբբենական և ժամանակագրական ցանկերը, ինչպես և ըստ բնույթի ու պարբերականության, հրատարակության վայրի դասավորված պարբերականների անունները, անձնանունների այբբենական ցուցակը, տպարանների անունները, ձեռագիր-մեքենագիր-խմորատիպ մամուլը, զանազան երկրներում հայ մամուլը սկզբնավորող պարբերականները և օգտագործված աղբյուրների ցանկը: Գիրքը ընթերցողին ծանոթաց-

² Հայտնի է, որ Վահան Քյուրքչյանը 1907 թ. հեռացել է Եգիպտոսից և հաստատվել Ամերիկայում:

նում է նաև Եգիպտոսում ներկա ժամանակներում լույս տեսնող պարբերականներին, որոնք թվարկված են «Եգիպտահայ մամուլը ներկայիս» խորագրի տակ:

Սակայն պետք է նշել, որ Ս. Պայրամյանի այսչափ արժեքավոր աշխատությունը որոշ մասերում խմբագրման կարիք ունի: Մեր կարծիքով, գրքի առաջաբանում հարկ չկար ծանրանալու այն հարցի վրա, թե տեղեկագրերը կարելի՞ էր մտցնել, թե՞ ոչ: Փոխարենը հեղինակը առաջաբանում կարող էր անդրադառնալ եգիպտահայ մամուլի ցուցակը կազմած մատենագետների աշխատանքի գնահատականներին: Առաջաբանում «Հետաքրքիր յաւելում» (VIII) խորագրով ներկայացված պարբերականները կարելի էր թվարկել «Հայտարարված, բայց լույս չտեսած» խորագրի տակ: Ինչ վերաբերում է գրքի հիմնական՝ երկրորդ մասին, ապա կարծում եմ՝ այստեղ ավելորդ են հավելվածների և բացառիկ համարների թվարկումները: Մի քանի պարբերականների մատենագիտական տվյալներում սպրդել են որոշ անճշտություններ: Այսպես, «Արարա» թերթի (1926, Ալեքսանդրիա) խմբագիրների կազմում նշված է Սուրեն Պարթևյանի անունը (168), մինչդեռ Սուրեն Պարթևյանը մահացել է 1921 թ.:

Գրքի երրորդ մասում անճշտություններ նկատվում են «Հայ մամուլի սկզբնավորությունը զանազան երկիրներում մեջ» վերնագրի տակ զետեղված ցանկում, որը Արտաշես Տեր-Խաչատուրյանի «Հայ մամուլի ցուցակ» գրքի (Գլենդեյլ-Կալիֆորնիա, 1987) 19-րդ էջի արտատպությունն է: Թերությունները վերաբերում են այդ էջին: Այսպես, «Տարեգրություն» պարբերականի լույսընծայման տարեթիվը նշված է 1800 թ.: Պետք է լինի՝ 1799 թ.: Արևելահայ առաջին պարբերականի անունը նշված է «Արևելեան ծանուցմանց», լույսընծայման տարեթիվը՝ 1815: Պետք է լինի՝ ,Արևելեան ծանուցմունք», 1816 թ.:

Թուրքիայում հայ մամուլը սկզբնավորող պարբերական համարվել է «Ազգասերը», 1830 թ.: Պետք է լինի՝ «Լրոյ գիր», 1832 թ.: «Ազգասերը» լույս է տեսել Կալկաթայում (Հնդկաստան), 1845 թ.: Շվեյցարիայում առաջին հայերեն պարբերականը համարվել է «Դրոշակը», 1891 թ.: Մինչդեռ առաջին հայերեն թերթը եղել է «Հնչակը», որը լույս է տեսել 1887 թ., Ժնևում (Շվեյցարիա): Նման կարգի վրիպումները չեն իջեցնում գրքի արժեքը: Գիրքը էական ավանդ է եգիպտահայ մամուլի ուսումնասիրման բնագավառում և արժանի է բարձր գնահատականի: Հեղինակը՝ Ս. Պայրամյանը, հոգատար ու բարեխիղճ վերաբերմունք է ցուցաբերել իր ձեռնարկած գործի նկատմամբ, ջանացել է կազմել եգիպտահայ մամուլի լիակատար ցուցակը՝ ստուգված, ճշտված մատենագիտական տվյալներով: Եվ այդ նրան հաջողվել է:

Այս աշխատությունից կարող են օգտվել և՛ ներկայի գիտնական-բանասերներն ու մամուլի պատմաբանները, և՛ մատենագիրները, և՛ ապագա սերունդները, որոնց ուսումնասիրության նյութը կարող է դառնալ եգիպտահայ մամուլը:

ՆԱԶԱՐՅԱՆ Ս. Ս.

Բանասիրական գիտությունների թեկնածու